

նում է Սավաղիա լըրից. նախ ուղղում է գէպի արեւմուտք, ապա հարաւ-արեւմուտք, վերջը հիւսիս արեւմուտք մինչեւ Ճորոխի խառնուրդը: Դեպիսի վտակն ընդունում է Բագինա¹, Աղխուլ, Դիվցիսել, Ուտինգո, Կվիմքաուր, Դեվսկել², Պետրուլա, Ոխուրջինա, Յեմատի, Վալաշան, Շվախիվ, Սամխրեգս, Արալետ առուակները, որոնք ոռոգում են համանուն գեղերը եւ նրանց պարագաները: Դեւիս վտակը աջից ընդունում է Արագուլի, Էրիկա, Վանա-կանի, Նագիարի առուակները, որոնք ոռոգում են համանուն գեղերը:

Հնմխանյան:

ԱՏՐՈՇՏ

(Շարտառակներ):



ԲՈՒՐԳ ԳՋԵԼԸ ԵՒ ԳՈՐԳ ԳՈՐԾԵԼԸ ՂԱՐԱՐԱԿԸ

Ղարարակը գիւղերում եւ թէ Շուշի բաղադրում սովորութիւն կար եւ այժմ էլ ընդհանրացած է, որ հարեւանները իրենց գործը շուտ առաջ տանելու համար, որոշ օր հաւաքում են իրենց հարեւանների աղջկերանց, հարսներին եւ միասին աշխատում են թէ տանը եւ թէ դրսում՝ դաշտում: Այդ առում է միջի անել — այն է հաւաքական ուժով փոխադարձ միմեանց օգնել:

Միջին գլխաւորապէս լինում է բուրդ գլխուց. նշանակուած օրը ամէն մին իր սանդերքը (բուրդ գլխու պողպատէ ճաղերով գործիքը) վերցրած գնում է հա-

կանց գանգում ու սրտում գործնել Գե. երկ-սատանա-ների գաղափարը: Այս վտակի ափի Գե. սկել, Գե. վիսել առուակները յիշեցնում են Գե. խիսի անունը:

¹ Բագինա առուակի եւ գեղի անունները յիշեցնում են Սպեի եւ Թորգոմի Բագիններին նուիրած աւանների, ամրոցների եւ տաճարների անունները: Ասակած չկայ, որ Բագինան-Բագուտի, Բագդաւի, Բագաւանի, Բագրանի մի այլ գործածան է եւ ցոյց է տալիս, որ նա էլ անմիջական կրօնական կապ է ունեցել Ճորոխի Աւագանի միւս գաւառների հետ: Այս գաւառի օջ միայն ազարակներն ու եայլները նման են Ճորոխի Աւագանին միւս գաւառներին, այլ եւ աւերակներն էլ յիշեցնում են ընդհանրական կապը:

² Դեւսկել եւ Դիվցիսել — տես նախընթաց ծանօթութիւնը: Ինչպէս Թեւիս, Նոյնպէս Մաճիթել եւ Աջարա անձամբ չէմ մասն եւ տեղեկութիւններս բոլորն էլ Հիմնուած են Ռուսական Պաշտօնեաների ուսումնասիրութիւնների հիմունքով:

բեւանի տունը, ծաղապատիկ նստում են շարքով, տանտիկինը բուրդը բերում բաժանում է եւ նրանք կտոր վերցնելով, առաջ երկու ձեռով քծծում են՝ բաց են առնում խճճուած մազերը եւ սանդերքի ճաղերից անցնելով, փափկացնում, աղբից մաքրում, շատ մանր մազերը թողնում սանդերքի վրայ, երկայնքին կիսալուսնաձեւ տալով, ծնկների տակ դնում:

Այդ կիսալուսնաձեւ բուրդը առում է մալանչ, իսկ ճաղերի վրայ մնացած տականքը՝ քոլք, որը գործադրում են «գոչակներ» լցնելու:

Մալանչները իրար հետ միացնելով հաստ պարանի պէս քիչ ոլորում են, կծկում ձմերուկի մեծութեամբ եւ պատառուկ շինում: Այդ պատառուկները քանդելով, նորից գլում են, աւելի մաքուր մալանչներ շինում եւ դրանցից փախարակով թել մանում:

Ճախարակը ունի հետեւեալ մասերը՝ քոլք (անիւր), որի վրայ ամրացրուած է կոռնը (թելը), թելի վրայ շրտըվիկը, որ ձեռով պտտցնում են: Ճախարակը ունի ոտներ, ոտների վրայ հագցրած է պողպատէ իլիկը. իլիկի մասերն են կոլոր լիսեռ եւ կաշուի ականջը, որը ծառայում է իլիկը բարձրացնելու կամ ցածացնելու համար: Իլիկի ծայրին ձախ ձեռով բռնած մալանչը մօտեցնելով, իսկ աջ ձեռով շրտըվիկը պտտցնելով, թելը փաթաթում է վրան. այդպէս շարունակում են, մինչեւ որ թելը լիսեռի ամբողջ երեսը ծածկում է եւ գէպի իլիկի ծայրը դնալով կոնաձեւ է ստանում: Այդ կոնաձեւ հաւաքուած կծիկը, որին վեստ են ասում. հանում են իլիկից, եթէ թելը բարակ է ու ուղում են հաստ լինի, երկու վեստերի թելերը անցնում են ճախարակի իլիկին (ասեղին) եւ նորից մանում, վեստեր շինում: Թելը ներկելու համար նախ վեստերի ծայրերը բաց են անում ծաղապատիկ նստած աջ ու ձախ ծնկներով վրայ. այդ բացարածը առում է վեղիր:

Թելը ներկելուց առաջ մաքուր կրաշուր են պատրաստում, վեղիրները մէջը թրջում, որ պրկանան եւ թէ լաւ գոյն առնեն: Ներկը պատրաստում են տեղական ծաղիկներից ու բոյսերից եւ թէ չուկայում գնած այս ու այն պատրաստի նիւթերից: Ներկը որոշ քանակութեամբ ջրի հետ խառն մեծ կաթսաների մէջ եփ են տալիս, վեղիր-

